I

ԽԱՉԱՏՈՒՐ ԼԱԶԱՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾԸ (1789 – 1871 թթ.)

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Լազարյանների համբավավոր տոհմի մասին շատ է գրվել: Եվ դա միանգամայն բնական է: Նրանք, շուրջ մեկուկեսդարյա իրենց ազգանվեր գործունեությամբ, մնայուն հետք են թողել հայոց նոր շրջանի պատմության տարեգրության մեջ: Հայկական երկնակամարում նրանց փայլուն գործունեությունն ուղենշեց և դրա հաստատուն հիմքերը դրեց Հովհաննես Լազարյանը: Նա Պարսկաստանից Ռուսաստան (Աստրախան, ապա Մոսկվա) տեղափոխված Աղազար կամ Եղիազար Լազարյանի ավագ որդին էր: Խարիսխ գցելով Ռուսաստանի մայրաքաղաքում՝ Պետերբուրգում, նա ի զորու եղավ հմտորեն զուգակցելու պետական հետաքրքրությունները և ազգային շահերը: Ինչպես և պետք էր սպասել, մասնավորապես Լազարյան ճեմարանի և հայկական եկեղեցիների հիմնադրման նրա մնայուն գործը գնահատվել է ըստ արժանվույն:

Սակայն Հովհաննես Լազարյանի մահից հետո (1801 թ.) այդ գերդաստանի լայնածավալ գործունեությունն առանց խամրելու շարունակվեց ավելի քան մեկ դար: Նկատի պետք է առնել, որ հաճախ այնքան դժվարին չի լինում որևէ մեծաթափ ձեռնարկում սկսելը, որքան դրա երկարատև և կենսունակ գոյության ապահովումը. մանավանդ պահպանել և զարգացնել XIX դարի քաղաքական, տնտեսական բուռն զարգացումների ու վայրիվերումների ժամանակշրջանում: Առաջին Լազարյանների ուղենշած ազգային գործունեությունը շարունակեցին և այդ տոհմի հաստատուն տեղը հայոց պատմության մեջ ապահովեցին Հովհաննես Լազարյանի մերձավոր հետնորդները: Նրանցից յուրաքանչյուրը, իր հնարավորությունների սահմաններում, ներդրում կատարեց:

Նրանց մեջ բազմակողմանի ու լայնածավալ գործունեությամբ առանձնանում է Խաչատուր (Խրիստաֆոր) Լազարյանը: Նա հենց երիտասարդական տարիներին ներքաշվեց ակտիվ և պատասխանատու կյանքի ոլորտ: Հայտնի է, որ 1806–1812 թթ. ռուս–թուրքական պատերազմին գործուն մասնակցություն ունեցավ ճանաչված հայ գործիչ Մանուկ Բեյը, որի պալատում կնքվեց հաշտության պայմանագիր: Պատերազմի տարիներին նրա հետ առևտրական կապերի մեջ էր Հովհաննես Լազար-

յանի եղբայր Հովակիմը: Այդտեղ էր լինում նաև Հովակիմի կրտսեր որդին՝ Խաչատուրը, որը 1819 թ. ամուսնացավ Մանուկ Բեյի դստեր՝ Կատարինեի հետ[1]:

Ստացվեց այնպես, որ նա ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեցավ XIX դարի 20-ական թվականների վերջերին ռուս–պարսկական և ռուս–թուրքական պատերազմներին:

Խ. Լազարյանը 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի ժամանակ՝ մանավանդ պատերազմի վերջին փուլում, իրադարձություններին ակտիվ մասնակից Ներսես Աշտարակեցուց տեղեկություններ էր ստանում ռազմական գործողությունների և տեղում տիրող ընդհանուր դրության մասին[2]: Խ. Լազարյանը իշխան Կոստանդին Արղությանի և բանասեր Ալեքսանդր Խուդաբաշյանի մասնակցությամբ կազմել էր Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո Հայաստանի ինքնավար կարգավիճակը սահմանող նախագիծ՝ «Մի շարք առաջարկներ Վրաստանի և հարակից երկրամասերի մասին» անվանվող ծրագիրը, որը նախատեսում էր Ռուսաստանի կազմում Հայաստանի լայն ինքնավարություն[3]:

Նրանք, փաստորեն, առաջարկում էին վերականգնել հայկական թագավորությունը և Նիկոլայ I-ի տիտղոսներին ավելացնել «Հայոց թագավոր» տիտղոսը:

Ռուսաստանի տիրապետության տակ անցնող Արևելյան Հայաստանում բնակչությունը ստվարացնելու նպատակով նախագծում նախատեսվում էր (հոդ. 5) Պարսկաստանից կազմակերպել հայ բնակչության ներգաղթ: Նկատելի է, որ հեռավոր Պետերբուրգում ապրող հայրենասերներն այնքան լավատեղյակ էին Հայաստանում ստեղծված ժողովրդական վիճակին, որ հույժ անհրաժեշտ էին համարում ներգաղթ կազմակերպելը: Պատահական չպետք է համարել, որ ներգաղթի կազմակերպման հանձնախմբի մեջ ընդգրկվեց Պետերբուրգից հատուկ հրավիրված Խ. Լազարյանի եղբայր գնդապետ Եղիազար Լազարյանը, որը եռանդուն գործունեություն ծավալեց:

Խ. Լազարյանը մասնակցում էր նաև Հայաստանի սահմանների հարցի բարեհաջող լուծմանը: Ներսես արքեպիսկոպոսը ջանում էր Պարսկաստանի և Հայաստանի սահմանագիծ դարձնել ոչ թե Արաքս գետը, այլ Արարատյան լեռնաշղթան: Դրանով Մակուի գավառը ևս կմիացվեր Հայաստանին և իր լեռներով ու կիրճերով կդառնար բնական պատվար: Ներսես Աշտարակեցին քանիցս դիմում է Խ. Լազարյանին բարձրագույն իշխանությունների միջոցով իրականացնելու այդ ծրագիրը:

---

[1] *Տե՛ս Հակոբ Սիրունի. Նյութեր Ռումեն երկրներու հայոց անցյալեն.– «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 2, էջ 165:*

[2] *Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 13, 30, 53, 69, 153:*

[3] *Հայ հայրենասերների կազմած նախագծի մի տարբերակը Մոսկվայի ռազմապատմական արխիվի Լազարյանների ֆոնդում ժամանակին հայտնաբերել է անվանի պատմաբան Վ. Պարսամյանը և հավելվածի ձևով տեղադրել իր «Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» (Երևան, 1947) աշխատության վերջում (էջ 245–261), այդ փաստաթղթերից՝ իբրև սկզբնաղբյուրներից, օգտվել ենք մենք:*

Սակայն նրա ջանքերը ապարդյուն էին անցնում, որովհետև այդ տեսակետները չբաժանող Ի. Պասկևիչը մնում էր անդրդվելի[4]:

Նախագծի հեղինակները կարևոր նշանակություն էին տալիս բնակչության իրավական պաշտպանվածության հարցերին: Բնակչության իրավունքները պետք է ամրագրված լինեն օրենքներով, իսկ կալվածատերերի իրավասությունները տարածվեն միայն իրենց հողատարածությունների վրա: Հայ հայրենասերները դեմ էին արտահայտվում ճորտատիրությանը, քանի որ դրանից անընդհատ տուժում էին բնակչության ստորին շերտերը: Նրանք առաջարկում էին Վրաստանում վերացնել կամ գոնե խիստ սահմանափակել ճորտությունը (հոդ. 4): Ճորտությունը վերացնելու առաջարկով նախագծի հեղինակները կանգնում էին ժամանակի առաջադիմական գաղափարների պաշտպանության դիրքերում:

Նախագիծը դրական ընթացք չստացավ, մերժվեց, բայց էական նշանակություն ունեցավ Հայաստանի անունով առանձին վարչական միավոր՝ Հայկական մարզ ստեղծելու գործում: Մի իրողություն, որը չկատարվեց Վրաստանի պարագայում:

Ռուս–թուրքական 1828–1829 թթ. պատերազմի ժամանակ տեղի հայ բնակչության հետ աշխատանք տանելու նպատակով կայսրի հանձնարարությամբ Խ. Լազարյանը մեկնում է գործող բանակ: Նա ջանում է Դանուբյան երկրների հայության հոգսերը թեթևացնել: Նրա միջնորդությամբ վերափոխվում ու բարեկարգվում են Մոլդովայի Ս. Աստվածածին և Վալախիայի Ս. Գևորգ եկեղեցիները: Նա մեծ օգնություն է կազմակերպում Բուքրեշի դպրոցին, եկեղեցուն, բնակչությանը և հայերին հորդորում լինել միասնական: Մոլդովահայերը չեն մոռանում Խ. Լազարյանի սրտացավ վերաբերմունքը և մեկ տասնամյակ անց՝ 1839 թ., կրկին հայցում են նրա օգնությունը՝ դիմելու կաթողիկոսին տեղի իշխանավորների ապօրինությունների, ճնշումների հարցում: Նա բնակիչներին հայտնում է, որ իրենց խնդրանքը փոխանցել է կաթողիկոսին, իսկ տեղական իշխանություններին սաստելու համար դիմել է մեծ հեղինակություն ունեցող կոմս Ա. Բենկենդորֆին[5]:

* * *

Լազարյանների, հատկապես Խաչատուր Լազարյանի գործունեության առանցքը կազմել է իրենց անունը կրող ճեմարանը: Հայտնի է, որ Հովհաննես Լազարյանը մտահոգ լինելով հայ մանուկների ուսման խնդրում, մահից առաջ 200 հազար ռուբլի է կտակում ուսումնարան հիմնելու համար և կտակարար է նշանակում կրտսեր եղբորը՝ Հովակիմին: Ճեմարանը բացվում է 1815 թ. Մոսկվայում: Ուսումնարանը սկզբնական շրջանում բազում դժվարությունների է հանդիպում: Լուսավորության նախարարներ Ա. Գոլիցինը, Կ. Լիվենը Ա. Ուվարովը, Մոսկվայի գեներալ նահանգապետ Ա. Տորմասովը տարբեր առիթներով խոչընդոտում էին ճեմարանի բնականոն աշխատանքները: Հարուցվող արգելքները վերացնելու նպատակով բարձր ատյաններին ուղղված դիմումները մնում էին անհետևանք: Ի վերջո Լազարյանները խնդրի կարգավորման անսպասելի, նախադեպը չունեցող եղանակ են գտնում:

---

[4] *Տե՛ս Վ. Պ ա ր ս ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 108–109:*

[5] *ՄՄ, Լազարյաններ արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 162:*

Օգտագործելով բարձրաստիճան գործիչների հետ ունեցած իրենց կապերը՝ Հովակիմ Լազարյանը 1824 թ. դիմում է նախարարների կոմիտեի անդամ Ա. Արակչևին, որ համաձայնություն տա ճեմարանը լուսավորության նախարարության ենթակայությունից հանելու և իր գլխավոր ենթակայության տակ դնելու: Ստանալով նրա համաձայնությունը՝ Եփրեմ կաթողիկոսի միջոցով դիմում են Ալեքսանդր I-ին: Կայսրը հատուկ հրամանագրով թույլատրում է կատարել նման վերափոխություն[6]: Գլխավոր պետերի հովանավորության շնորհիվ ուսումնարանը կարողանում էր հաղթահարել ծառացած դժվարությունները և արգելքները:

Վերադաս ատյանների հանձնարարությամբ 1828 թ. ուսումնական հաստատությունների կոմիտեի անդամներ արևելագետներ Ադելունգի և Ֆրենի հետ Հովհաննես և Խաչատուր եղբայրները կազմեցին ճեմարանի կանոնադրությունը, որը պաշտոնապես ընդունվեց: Ճեմարանը անվանվեց «Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ»[7]: Ամրագրվեց նաև այն հանգամանքը, որ ինստիտուտն ապադասակարգային ուսումնական հաստատություն է, որտեղ կարող են ուսանել տարբեր դասակարգերի ու խավերի ընտանիքների զավակները:

Ինչպես հայտնի է, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ռուսական կառավարությունը ձեռնարկեց և պետության շահերին համապատասխան՝ Պետերբուրգում ստեղծվեց Բարեփոխումներ մշակող հանձնաժողով, որի կազմում ընդգրկված էին նաև Ա. Բենկենդորֆը և Խ. Լազարյանը: Մշակված նախագիծը, որը հայտնի է «Պոլոժենիե» անունով 1836 թ. մարտի 11-ին հաստատեց Նիկոլայ I-ը: Նոր կանոնադրությունը անհրաժեշտ էր դարձնում բարեփոխումներ իրականացնել նաև բոլոր հայկական գաղութների հոգևոր կյանքում:

Ռուսաստանի մայրաքաղաքների զույգ գաղութներում ստեղծվել էր բարդ իրավիճակ: Լազարյան ինստիտուտի եկամուտները չէին բավարարում օրեցօր աճող ծախսերը: Պակասող գումարը լրացնում էին Լազարյանները՝ իրենց անձնական միջոցներից: Մոսկվայի եկեղեցիների եկամուտները փոքր էին, իսկ Պետերբուրգինը՝ անհամեմատ մեծ: «Պոլոժենիեի» համաձայն թեմական դպրոցներ հիմնելու համար առաջացել էր գրագետ հոգևորականների մեծ պահանջ: Խ. Լազարյանը, լինելով բոլոր այդ իրադարձությունների կենտրոնում, խիստ մտահոգ էր և ստեղծված դժվարին իրավիճակից դուրս գալու ելք էր որոնում: Ի Վերջո նա մշակեց այդ խնդիրները լուծելու հիմնավոր տարբերակ և 1837 թ. սեպտեմբերին հանձնեց Ա. Բենկենդորֆին՝ բարձրագույն ատյանների իրավասությանը ներկայացնելու համար: Նա առաջարկում էր մայրաքաղաքների 5 եկեղեցիները միավորել Լազարյան ճեմարանի հետ, ստեղծել տնտեսական մի ընդհանուր վարչություն, որտեղ մեկի տնտեսական միջոցների պակասը կլրացվի մյուսի կողմից: Կրթված հոգևորական-

---

[6] *Տե՛ս* Собрание актов к обозрению истории армянского народа, г. III. М., 1933, с. 93. *Արակչեևը կարճ ժամանակից հետո հրաժարվում է այդ պաշտոնից: Հովակիմի զավակների, հատկապես Խաչատուրի խնդրանքով ճեմարանի գլխավոր պետ է նշանակվում ոստիկանության երրորդ բաժանմունքի պետ Ա. Բենկենդորֆը (1828-1844), նրա մահից հետո՝ պետական խորհրդի նախագահ Ա. Օրլովը (1860-1870): Այնուհետև այդ պաշտոնը վարում է լուսավորության նախարար Դ. Տոլստոյը (1870-1872):*

[7] *Տե՛ս ՄՄ, Լազարյանների արխիվ, թղթ. 119, գ 56, վավ. 94, թ. 55:*

ներ պատրաստելու համար նախագծի հեղինակը առաջարկում էր Լազարյան ինստիտուտում բացել հոգևոր բաժին[8]: Ա. Բենկենդորֆը, իր հիմնավորումները հավելելով, նախագիծը ներկայացնում է ներքին գործերի նախարար Դմիտրի Բլուդովին: Վերջինս մշակած առաջարկը համարում է նպատակահարմար և արդարացված: Նոր կանոնադրության (պոլոժենիեի) պահանջով անհրաժեշտ էր հարցը համաձայնեցնել Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Առանց էական լրացումներ կատարելու, նախագծին հավանություն են տալիս և վավերացնում Հովհաննես Կարբեցի կաթողիկոսն ու սինոդի անդամները[9]:

Կայսրը 1841 թ. հունվարին հավանություն է տալիս ներկայացված վերափոխումներին, իսկ սենատը հաստատում է այն: Խ. Լազարյանի մշակած ծրագրի իրավական ուժ ստանալը էական դրական նշանակություն ունեցավ ինչպես ինստիտուտի, այնպես էլ մայրաքաղաքների համայնքների համար:

1844 թ. վախճանվեց Ա. Բենկենդորֆը: Լազարյան եղբայրների խնդրանքով ինստիտուտի գլխավոր պետ նշանակվեց կոմս Ալեքսեյ Օրլովը: Վերջինս գտնում էր, որ ինստիտուտը կարիք ունի արմատական բարեփոխումների: Ներկայացված և 1848 թ. կայսեր կողմից հաստատված ծրագրի համաձայն՝ Լազարյան ինստիտուտը հավասարեցվում է առաջին կարգի լիցեյներին: Նրան տրվում է Դեմիդովի, Բեզբորոդկոյի, Ռիշելյեի լիցեյների կարգավիճակ: Վեցամյա ուսուցումը դարձվում է ութամյա[10]:

1850 թ. ընդհատվեց Լազարյան տոհմի արական գծով ժառանգությունը. մահացավ Խ. Լազարյանի փոքրահասակ զավակ Հովհաննեսը: Նրա ծնողները և հորեղբայրը, ի հիշատակ Լազարյանների վերջին ժառանգի, 60 հազար ռուբլի արծաթ գումար նվիրաբերեցին ճեմարանում աղքատ հայ ընտանիքների երեխաների համար նախապատրաստական բաժին բացելու նպատակով: Նման բաժին բացելը հույժ անհրաժեշտ էր գավառներում ապրող ռուսերեն չիմացող ընչազուրկ երեխաներին ինստիտուտ ընդունվելը դյուրացնելու համար: Նախապատրաստական բաժին բացելու համար, բացառության կարգով, Նիկոլայ I-ը տվեց իր համաձայնությունը և շնորհակալություն հայտնեց բարեգործներին:

1860 թ. Ա. Օրլովին ճեմարանի գլխավոր պետի պաշտոնում փոխարինեց Ալեքսանդր II-ի բարեփոխումների ակտիվ մասնակից Վ. Բուտկովը: Նորանշանակ պետը ուշադրություն դարձրեց այն հանգամանքի վրա, որ դպրոցական կանոնադրությամբ գիմնազիաների շրջանավարտները առանց քննությունների ընդունվում են համալսարան, որը չէր տարածվում Լազարյան ճեմարանի վրա: Այդ կարգը ինստիտուտի վրա կիրառելու համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով (Ս. Էմին, Ա. Նազարյանց, Գ. Քանանյան, Ն. Տիխոնրավով): Հանձնաժողովը փոփոխություններ կատարեց դասավանդվող առարկաների ծրագրերի մեջ: Իրարից որոշակի ան-

---

[8] *Տե՛ս* Մ. Մ ս ե ր յ ա ն ց. *Յիշատակարան կենաց և գործոյ մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի, Մոսկուա, 1856, էջ 102:*

[9] *Տե՛ս ՄՄ, Լազարյանների արխիվ, թղթ. 118, վ.19:*

[10] *Տե՛ս* А. Х а х а н о в. Тридцатилетие специальных классов Лазаревского института восточных языков. М., 1903, с. IV.

ջատեց գիմնազիական և արևելյան լեզուների ուսուցումը: Վերջինիս ուսուցումը դրեց ամուր հիմքերի վրա, երկու տարին դարձվեց երեք տարի: Կատարած բարեփոխումները իրականացնելու համար պահանջվում էին ֆինանսական մեծ միջոցներ, որոնց աղբյուրը չէր գտնվում: Խ. Լազարյանը ինստիտուտը հանում է դժվարին կացությունից՝ իր անձնական միջոցներից նվիրաբերում է մեծ գումար՝ 200 հազար ռուբլի: Նրա այդ քայլը խորը տպավորություն է գործում բոլորի վրա: Ալեքսանդր II-ը նրան պարգևատրում է «Սպիտակ առյուծի» շքանշանով[11]: Այդ բարեփոխումների շնորհիվ լուծվում է շրջանավարտների համալսարան ընդունվելու հարցը: Ինստիտուտ են ընդունվում լավորակ սաներ, աճում է աշակերտների քանակը:

Որոշ ժամանակ անց ինստիտուտի գլխավոր պետ Վ. Բուտկովը ներկայացնում է ուսումնարանը հիմնավոր վերափոխելու հետևյալ նախագիծը. նշանավոր տոհմի վերջին ներկայացուցչի՝ Խ. Լազարյանի մահից հետո ինստիտուտը դնել լուսավորության նախարարության ենթակայության ներքո: Պահպանել չքավոր երեխաների համար նախապատրաստական բաժին ունենալու սահմանված կարգը, հոգաբարձուի պաշտոնը դարձնել պատվավոր, բայց պահպանել «Լազարյան» անվանումը: Ինստիտուտ մտցնել դասական գիմնազիայի լրիվ դասընթաց[12]: Այդ նախագիծը իրականացնելու պարագայում ճեմարանը հեռանում էր արևելյան լեզուներ ուսուցանելու իր առաքելությունից և վերածվում է մոսկովյան սովորական մի գիմնազիայի:

Խ. Լազարյանը մերժեց առաջարկվող փոփոխությունների նախագիծը: Նրան մտահոգում էր ճեմարանի ապագայի հարցը: Ծերությունն ու հիվանդությունը ավելի էին մտահոգ ու անհանգիստ դարձրել ճեմարանի ճակատագրով ապրող գործչին: Նա տնօրենի պաշտոնից ազատում է ներկայացված նախագծի ջատագով Բաբստին և նրա փոխարեն նշանակում է (1869 թ.) իր փեսային՝ Հովհաննես Դելյանովին: Վերջինս լավ ծանոթ էր ինստիտուտին, լուսավորության փոխնախարար էր և ճանաչված էր գործիմացությամբ ու բարեկիրթ վարքագծով: Դելյանովի խորհրդով, որ լավ էր ճանաչում նախարարին, Խ. Լազարյանը դիմում է անկանխատեսելի վճռական քայլի: Ինստիտուտի գլխավոր պետի պաշտոնում հրավիրում է լուսավորության նախարար կոմս Դմիտրի Տոլստոյին և որոշում ճեմարանը դնել լուսավորության նախարարության ենթակայության տակ:

Դ. Տոլստոյը կրթության, առհասարակ հասարակական երևույթների մասին ուներ առաջադիմական հաստատուն սկզբունքներ: «Հաստատուն են միայն այն բարեփոխումները,– գրել է նա,– որոնք իրենց հիմքում ունեն պատմական հող, որոնք չկտրելով կապերն անցյալի հետ և պահպանելով նրանում եղած լավը, չեն ոչնչացնում այն, այլ զարգացնում ու կատարելագործում են ժամանակի պահանջներին համապատասխան»[13]: Նախարարը մոտիկից ծանոթանում է ճեմարանի աշխատանքներին: Նա անհանգստանում էր, որ ուսումնարանը, փաստորեն, բաղկացած

---

[11] *Տե՛ս* Հ. Թ ա դ և ո ս յ ա ն. *Պատմություն Լազարյան տոհմի և Լազարյան ճեմարանի արևելյան լեզվաց, Վիեննա, 1953, էջ 387 – 389:*

[12] *Տե՛ս* Α. Χ α χ α ν ο ϑ. *նշվ. աշխ., էջ IV – IX:*

[13] *Նույն տեղում, էջ XIII*

է իրար հետ կապ չունեցող երկու ուղղություններից: Մեկը գիմնազիան է, իսկ մյուսը՝ արևելյան լեզուների բարձրագույն դասընթացը: Մեկի լիարժեք դասընթացը խանգարում է մյուսի լիարժեքությանը: Այդ պատճառով Դ. Տոլստոյը ծրագրերում և ուսման տևողության մեջ այնպիսի փոփոխություններ է մտցնում, որպեսզի խստորեն պահպանվի գիմնազիական ծրագրի ընդհանուր դասընթացը և մյուս կողմից՝ արևելյան լեզուների ուսուցումը հավասարեցվի համալսարանական մակարդակին: Մշակված ծրագիրը հավանության է արժանանում և 1872 թ. հաստատվում բարձրագույն հրամանով: Եվ դրանից հետո մինչև վերջ՝ 1918 թ., ինստիտուտն անխափան առաջնորդվում է այդ ծրագրով: Այդպիսով՝ Խ. Լազարյանը իր մահից առաջ համարձակ ձեռնարկումով կարողացավ ապահովել Լազարյան ճեմարանի հետագա կեսդարյա գործունեությունը:

* * *

Լազարյան տոհմի արժանավոր ներկայացուցիչը իր ունակությունները, եռանդը չէր գործադրում միայն ուսումնարանի կենսունակ գոյատևումը պահպանելու վրա: Նա լայն ու առաջադեմ հայացքներ ուներ կրթության, առհասարակ հայ հասարակական կյանքի երևույթների նկատմամբ և ջանում էր կյանքում կիրառել, իրողություն դարձնել այդ գաղափարները:

Անգամ շատ մատաղ հասակում կրթության հարցում Խ. Լազարյանը առաջ էր քաշում հայ իրականության մեջ տիրապետող պահպանողական, հետամնաց մեթոդներին հակադիր, միանգամայն լուսավոր գաղափարներ: Դեռևս Լազարյան ճեմարանը բացվելուց տարիներ առաջ Եփրեմ կաթողիկոսին գրում էր, որ ուսուցումը պետք է լինի «համեստ, թարդ (առանց) իւիք ցասման, բարկութեան, և գանից պատժոյ հմտեցուցանել, զի բարկութիւն, սպառնալեօք ահացուցանելն և խիստ պատժելն բարբարոսական է գործ, միշտ խռովեցուցիչ և յուսահատեցուցիչ աշակերտի, նմանապէս և տախտկութիւն… ուսուցչին»[14]: Ուսման գործընթացը բարձր մակարդակով ու նոր մեթոդներով կազմակերպելու նպատակով ճեմարան էր հրավիրում լավագույն մանկավարժների, անգամ Մոսկվայի համալսարանի դասախոսների: Աշակերտների բարոյահոգեբանական դաստիարակության հարցում հատուկ նշանակություն էր տալիս նրանց կրոնական ուսուցմանը:

Նա հետևողականորեն հանդես էր գալիս երկպառակություններ առաջացնող երևույթների դեմ և քարոզում էր համերաշխ ու միասնական լինելու գաղափարը: Ազգային միասնություն քարոզելու նրա հայացքները լավագույնս դրսևորվեցին մի դեպքի առիթով: «Հյուսիսափայլ» ամսագրում տպագրված երկու հոդվածներում վիրավորական արտահայտություններ են եղել որոշ հոգևորականների հասցեին: Այդ փաստը մեծ իրարանցում առաջացրեց: Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Գ. Այվազյանը բողոքեց կաթողիկոսին և Լազարյան ճեմարանի ու եկեղեցիների հոգաբարձու Խ. Լազարյանին: Վերջինս բացատրություն պահանջեց ամսագրի խմբագիր Ս. Նազարյանից: Խմբագիրը ներկայացրեց ամսագրի հրապարա-

[14] *Տե՛ս Լ. Ե ռ. Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1837–1912), Թիֆլիս, 1914, էջ 92*

կախտական էությունը, հանուն լուսավորության, հետամնացությունը խարազանող նրա ուղղվածությունը և ավելացրեց, որ Գ. Այվազյանը շփոթում է հոգևորականություն ընդգրկուն հասկացությունը նրա առանձին անհատների հետ:

Խմբագրի բացատրությունից բավարարություն չստանալով Խ. Լազարյանը, հավատարիմ մնալով ազգային երկպառակություն, լարվածություն չհարուցելու իր հավատամքին, ճեմարանի վերատեսուչ Հ. Դելյանովին գրում է. «Ես, իբրև հոգաբարձու մայրաքաղաքների հայոց եկեղեցիների և միևնույն ժամանակ հոգաբարձու իբրև Լազարյան ճեմարանի թե խղճիս թելադրությամբ, թե ի պաշտոնե, ավելի ևս արդարության պահանջով ցավ ի սիրտ ստիպված եմ այստեղ առաջ բերել իսկական ճշմարտության փաստերը, որովհետև անբարեհույս է և մեղավոր այն անձը, որը տարածում է թշնամության սերմեր, որով վնասում է, անպատվում իր հայրենակիցներին… Որտեղ անձնական կիրքը և աչառությունն է դեր խաղում, այնտեղ բարիք սպասել չի կարելի»: Եվ ապա ավելացնում է. «Ճշմարիտ օգտակար ամսագրի գլխավոր պարտականությունը և նպատակը պետք է լինի որքան կարելի է շատ ամրացնել հայ ժողովրդի մեջ խաղաղություն, համերաշխություն և բոլորին էլ տանել դեպի ընդհանուր բարի նպատակ, բայց ոչ մի դեպքում չը բաժանել չը տարածել թշնամության սերմեր չը գրգռել կրքեր և արատներ, որոնք առանց այն էլ չափազանց շատ են տարածված անբարեհույս հայերի մեջ»[15]:

Այս հարցում պարզորոշ դրսևորվում է հասարակական տարբեր խավերի հայացքների տարբերությունը: Ամսագրի խմբագիրը, եթե շահեկան էր համարում խավարամոլության դեմ անհաշտ պայքարը, ապա հոգաբարձու Լազարյանին առաջին հերթին հետաքրքրում էր ժողովրդի մեջ համերաշխության, միասնության գաղափարի արմատավորումը:

Անվանի պատմաբան Լեոն «Հյուսիսափայլ» ամսագրի հետ կապված վերոհիշյալ դեպքը նկարագրելով, եզրակացնում է, որ հավանաբար Ս. Նազարյանը պաշտպանություն գտավ ռուսաց օրենքների մեջ, այդ պատճառով էլ «վեհագնեայ իշխանը (Խ. Լազարյանը – Վ. Բ.) դադարեցրեց իր հալածանքը «Հյուսիսափայլի» դեմ[16]: Կարծում եմ ամենևին արդարացի չէր լինի Խ. Լազարյանին դնել ամսագրի հալածողների շարքում: Նա եթե նման մտադրություն ունենար, բարձրադիր պաշտոնյաների հետ իր բարեկամական կապերի միջոցով կարող էր հասնել ամսագրի փակմանը կամ նման փորձ կկատարեր: Դրանից զատ չէ՞ որ նրա կամեցողությամբ էր, որ Ս. Նազարյանը շարունակեց ակտիվ մանկավարժական աշխատանքը Լազարյան ճեմարանում: Այդ ամենից բացի հենց վաստակաշատ պատմաբանի բերած փաստերից պարզորոշ երևում է, որ նա շատ բարձր էր գնահատում հայերեն ամսագրի հրատարակումը, ուստի նման քայլի դիմել չէր կարող: «Հրապարակել որևէ հայկական ամսագիր,– գրում է Խ. Լազարյանը,– նպատակ ունենալով ազգի թե կրոնական-բարոյական կրթությունը թե լեզուների և գիտությունների, մանավանդ պատմական գիտելիքների լայն տարածումը, օգտակար է և անհրաժեշտ նոր սերնդի,

---

[15] *Տե՛ս Լ ե ո. Հայ հրապարակախոսության հիսնամյակը (գրական-գիտական ժողովածու), Թիֆլիս, 1908, էջ 61–62:*

[16] *Նույն տեղում, էջ 63:*

գլխավորապես հայ երիտասարդության ընդհանուր կրթության տեսակետից, մանավանդ եթե հիշենք հայ թեմական դպրոցների և զանազան ուսումնական ձեռնարկների պակասությունը»[17]:

Խ. Լազարյանը «Հյուսիսափայլի» հետ կապված դեպքից զատ, Ն. Աշտարակեցուն ուղղած նամակներում և այլուր մշտապես նշում էր ազգի միասնական լինելու անհրաժեշտությունը: Ավելորդ չէ նշել, որ տարբեր ժամանակներում ապրած մեծանուն հայ գործիչներն ազգի հաջողության գրավականը տեսնում էին միասնության մեջ: Դա գալիս էր հայոց ազգային ճակատագրի խորամիտ գնահատումից: Տարաբախտ պայմանների բերումով աշխարհով մեկ սփռված, տարբեր մտածելակերպով ու հոգեբանությամբ ապրող հայության համար կենսական անհրաժեշտություն էր դարձել միավորվելը, ազգային ընդհանուր աշխարհայացք մշակելը: Փաստորեն, Խ. Լազարյանը և շատ ուրիշ գործիչներ նախակարապետներ են եղել Եղիշե Չարենցի համար, որն ազգային միասնության մտորումները բանաձևեց բյուրեղացած ձևով. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»[18]:

Հայոց պատմական ճակատագիրը անհրաժեշտաբար ծնունդ տվեց մեկ այլ երևույթի՝ բարեգործության տարածմանը: Հավանաբար այլ ժողովուրդների մեջ բարեգործական նախաձեռնումներն այնպիսի մեծ ծավալ չստացան ինչպես հայության շրջանում: Լազարյանները հայտնի էին իրենց բարեգործություններով: Նրանց մեջ աչքի էին ընկնում նաև Հովհաննես և հատկապես Խաչատուր եղբայրները: Նրանք անձնական բազմաբնույթ և բազմաքանակ քայլեր կատարելուց բացի խթանում էին հասարակական լայն ընդգրկում ունեցող բարեգործությունները:

Պայմանների բերումով ռուսական մայրաքաղաքներում քիչ չէին ընչազուրկ ու աղքատ հայերը: Մոսկվայի բնակիչ Սահակ Գասպարովը (Գասպարյան) նախաձեռնում է հայ ընչազուրկների համար աղքատանոց կամ անկելանոց հիմնել: Հանգամանորեն մշակված նախագիծը արժանանում է կառավարության հավանությանը, և 1949 թ. անկելանոցը սկսում է գործել: Գասպարյան անկելանոցը երկարակյաց և իր առաքելությունը լիովին արդարացնող հաստատություն է դառնում: Բարեգործական այդ հիմնարկը, անկախ բնակավայրերից, շատ ընչազուրկների օգնեց, ապահովեց օթևանով: Իր անմիջական կոչումից բացի անկելանոցը, որի պատվավոր անդամներն էին Լազարյան եղբայրները, դարձավ տեղի հայությունը իրար հետ կապող հայ համայնքի հասարակական կարևոր հաստատություններից մեկը: Համայնքի ընդհանուր հավաքները հաճախ հրավիրվում էին 600 հոգու համար նախատեսված նրա ընդարձակ սրահում:

Ս. Գասպարյանին, երբ հարց են տալիս, թե ի՞նչն իրեն դրդեց աղքատանոց հիմնել, նա հայտնում է, որ Լազարյանների բազմաթիվ բարեգործությունները իր մեջ ծնեցին հայրենակիցներին օգտակար լինելու մեծ ցանկություն: Դրանից բացի Լա-

---

[17] *Նույն տեղում, էջ 61–62:*

[18] *Տե՛ս Ե. Չարենցի «Պատգամ» աքրոստիկոսային բանաստեղծությունը, որ առաջին անգամ լույս է տեսել «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ 1934 թ.:*

զարյան եղբայրները քաղաքի Ս. Խաչ եկեղեցու մոտակայքի իրենց հողամասը հոժարակամ հատկացրեցին այդ նպատակին, ինքն էլ ձեռնարկեց այդ գործը[19]:

* * *

Ռուսական մայրաքաղաքների հայկական շրջաններում գիտության, մասնավորապես հայագիտության զարգացումը մեծապես պայմանավորված էր Լազարյաններին հոգեհարազատ գիտության այդ ճյուղը խթանելու նախանձախնդրությամբ: Նշանավոր այդ գերդաստանի ներկայացուցիչներից գիտության, լուսավորության նկատմամբ հատուկ հետաքրքրություններ ուներ հատկապես Խաչատուր Լազարյանը: Նրա այդ հակումը դրսևորվում էր դեռ շատ երիտասարդ տարիներից: Այդ էր պատճառը, որ Հովակիմ Լազարյանը խորհուրդ էր տալիս որդուն՝ Խաչատուրին, Եվրոպայում շրջագայելու ժամանակ (1820-ական թվականների սկզբներին) անպայման այցելել Վենետիկ. «Ուր տեսանել կարէք և Մխիթար աբբայի միաբանութիւն և հայոց մեծ ակադէմին»[20]:

Խ. Լազարյանը հանձնարարեց գրող, պատմաբան Սերգեյ Գլինկային նյութեր հավաքել և գրել հայոց պատմության և հայ–ռուսական հարաբերությունների վերաբերյալ աշխատություններ: Հումանիստ ստեղծագործող Ս. Գլինկան տարվեց հայոց պատմությամբ և մշակույթով: Նա գրեց երկու պատմվածք Հայաստանի անցյալից, որոնցից մեկը նվիրված էր Հայկի և Բելի առասպելին[21]: Գրեց նաև երկու մասից բաղկացած «Հայ ժողովրդի պատմության տեսություն» (1832–1833) աշխատությունը[22]: Գլինկան կազմեց և հրատարակեց հայ–ռուսական հարաբերությունների վավերագրերի ժողովածու երեք հատորով: Արժեքավոր այդ ժողովածուում ներառվել են այնպիսի կարևոր վավերագրեր, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը[23]: Նա ճեմարանի դասախոս Մսեր Մսերյանին առաջարկեց գրել հայոց պատմության և հայոց եկեղեցու ընդհանուր պատմության վերաբերյալ աշխատություն: Մսերյանը լծվեց այդ աշխատանքներին և շուտով հրատարակեց կրոնադավանաբանական մի շարք ուսումնասիրություններ: Խ. Լազարյանը մեծահարուստներին հորդորում էր միջոցներ չխնայել, ընդհակառակը շռայլորեն այն հատկացնել հասարակական շահեր հետապնդող նպատակների, քրիստոնեական քարոզչության, գիտության ու լուսավորության համար:

«Ամենուրեք, բոլոր երկրներում,– գրում էր նա,– միլիոնատերերը և հարուստները բարեխղճորեն կատարում են իրենց քրիստոնեական պարտականություններն ու զգացումները: Նրանք շռայլ քայլեր ու նվիրատվություններ են կատարում՝ ի հիշատակ իրենց հանգուցյալների և հատկապես ուսումնարաններ, աղքատանոցներ

---

[19] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 114, վավ. 592, թ. 14:*

[20] Российский государственный исторический архив (РГИА), ф. 880, оп. 1, д. 240, л. 190.

[21] *Տե՛ս* С. Н. Г л и н к а. Две повести в стихах почерпнутых из древних армянских летописей. М., 1831*:*

[22] *Տե՛ս* С. Н. Г л и н к а. Обозрение истории армянского народа, ч. 1–2. М., 1832–1833, Ереван (1990):

[23] *Տե՛ս* С. Н. Г л и н к а. Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. 1–3. М., 1833 – 1838*:*

հիմնելու կամ այլ անհրաժեշտ եկեղեցական և ազգային հասարակական շահեր հետապնդող նպատակներով: Այդտեղ հարուստների կողմից խնայողություն կատարելը անտեղի, անվայելուչ, անգամ դատապարտելի է»: Եվ ապա խորհուրդ էր տալիս միջոցներն ուղղել «հոգուտ եկեղեցու և հայ ժողովրդի, որ պահանջ ունի և ծարավի է կրթության ու գիտության»[24] *(ընդգծումը մերն է. –Վ. Բ.):*

Լազարյան ճեմարանում սկզբնավորված և աշխուժորեն ծավալվող հայագիտական, արևելագիտական աշխատանքները հովանավորողները Լազարյաններն էին և նրանց մեջ առաջին հերթին և գլխավորապես Խ. Լազարյանը: Գիտության հարցերում նրա ուշագրավ վերաբերմունքը հավաստելու նպատակով վկայակոչենք միայն մեկ փաստ: Նա 1854 թ. Մկրտիչ Էմինին գրեց, որ գոհունակությամբ է ընդունել հայկական ձեռագրերը հրատարակելու նրա պատրաստակամությունը: Կրկնակի բավարարված է, որ կարևոր այդ ձեռնարկումն իրականացնելու է իրենց ուսումնարանի նախկին սան՝ ներկայիս հարգարժան պրոֆեսորը: Խ. Լազարյանը միաժամանակ տեղեկացրեց, որ իր եղբայր Հովհաննեսի հետ նպատակ է դրել աստիճանաբար հրատարակել պատմական արժեք ունեցող հին հայկական ձեռագրերը: Առաջարկում է առկա հինգ ձեռագիրը հրատարակել անհրաժեշտ բացատրություններով ու ծանոթագրություններով, որպեսզի հասկանալի դառնան հետաքրքրվողներին: Նա Մ. Էմինին խնդրում է պարզել, թե ըստ անհրաժեշտության ձեռագրերից որ մեկը պետք է հրատարակել առաջին հերթին և ըստ այդմ մյուսների հրատարակության համար սահմանել հերթականություն: Ապա հավելում է, որ տպագրական ծախսերը հոգալու համար նշել ձեռագրերի ծավալը: Միաժամանակ պրոֆեսորին խնդրում էր առանց նեղվելու, հանուն փոխադարձ հարգանքի ու բարոյական բավարարվածության պարզորոշ հայտնել իր աշխատանքի վարձատրության չափը[25]:

Խ. Լազարյանը համագործակցում էր և սերտ կապեր ուներ Ֆրանսիայի հայագետներ Վիկտոր Լանգլուայի (1829–1869) և հատկապես Փարիզի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Էդուարդ Դյուլորիեի (1807–1881) հետ: Նա Մ. Էմինին տեղյակ էր պահում (1854), որ իր խնդրանքով «իր արժանավոր բարեկամ» Է. Դյուլորիեն արտասահմանում պատրաստել է տվել հայերեն տառատեսակների ձուլվածքը (մատրիցան), որը շուտով կուղարկի: Նա խնդրում էր որոշ ձեռագրերի պատճեններն ուղարկել հայագետին՝ Վիեննա կամ Փարիզ[26]: Խ. Լազարյանը միաժամանակ հայտնում էր, որ Դյուլորիեի «Հայերը 1854 թվին» հոդվածը հրատարակվել է ռուսերեն «Կովկաս» ամսագրում, անհրաժեշտ է այն թարգմանել և տպագրել նաև հայերեն:

Օտարազգի հայագետի հետ ունեցած բարեկամական հարաբերությունների մասին է վկայում նաև հետևյալ փաստը: Խ. Լազարյանը տեղեկացնում է, որ Է. Դյուլորիեն իր ստեղծագործությունները հայոց դավանանքի, Լազարյան ճեմարանի մասին և մեծ քանակությամբ այլ գրականություն ուղարկել է իր անունով: Դրանք

---

[24] *Տե՛ս* Центральный исторический архив Москвы (ЦИАМ), ф. 2050, оп. 1, д. 45, л. 1–2.

[25] *Տե՛ս ՄՄ, Լազարյանների արխիվ, թղթ. 100, վ.11, թ 1–3:*

[26] *Նույն տեղում, վավ. 10:*

հասցեագրել է անձամբ իրեն, Պետերբուրգի կայսերական ակադեմիային և Լազարյան ինստիտուտին: Նա հայտնում է, որ ինքը կհոգա շոգենավով տեղափոխության ծախսերը, միայն խնդրում էր հետևել, որ մաքսատանը և տեղափոխության ժամանակ գրքերի կապոցներն առանց վնասվելու տեղ հասցվեն[27]*:*

Գիտության նկատմամբ նրա հետաքրքրություններն այն աստիճան ճանաչման էին արժանացել, որ Պետերբուրգի կայսերական ակադեմիան, սակավաթիվ մարդկանց թվում, հրավիրում է նաև նրան մասնակցելու ակադեմիայի հիմնադրման 130-ամյակին նվիրված հանդիսավոր ժողովին:

Խաչատուր Լազարյանը վախճանվեց 1871 թվին: Ռուսահայերը, նկատի առնելով նրա ծառայությունները, դիմեցին իշխանություններին թույլ տալու հանգանակություն կազմակերպել և Լազարյան ինստիտուտում դնել նրա կիսանդրին: Այդպես էլ արվեց, հանգանակած գումարով քանդակվեց և ճեմարանի դահլիճում դրվեց նրա մարմարե կիսանդրին:

Այսպիսով՝ խորապես ըմբռնելով ժամանակի պահանջները և ազգային շահերը, Խաչատուր Լազարյանը մշտապես նվիրված, մնաց ու ծառայեց իր ժողովրդին: Մեծ է լուսավորություն տարածելու, հայագիտության զարգացմանը նպաստելու, բարեգործություն կատարելու, հարազատ ժողովրդին անշահախնդիր ծառայելու նրա ներդրումը: Եվ այդ ամենը նա կատարեց անմնացորդ նվիրումով, կյանքի մանրուքներից վեր կանգնած, ազնվականի վեհ պահվածքով: Նա դարձավ իր մեծանուն հորեղբոր՝ Հովհաննես Լազարյանի գործի արժանավոր շարունակողը:

Խաչատուր Լազարյանի բազմաբնույթ գործունեության համառոտ այս շարադրանքը, կարծում եմ, հավաստում է այն իրողությունը, որ նա արժանի է տեղ գրաղեցնելու XIX դ. հայ նշանավոր գործիչների շարքում:

КРАТКИЙ ОЧЕРК ЖИЗНИ ХАЧАТУРА ЛАЗАРЯНА

(1789–1871 гг.)

ВЛАДИМИР БАРХУДАРЯН

Р е з ю м е

Полуторавековая деятельность семьи Лазарян оставила неизгладимый след в новой истории Армении. Патриотические и благотворительные традиции семьи были заложены Ованнесом Лазаряном. Его дело продолжил и развил его племянник Хачатур Лазарян. В период присоединения Армении к России Хачатур Лазарян с группой патриотически настроенных соотечественников под эгидой России подготовил программу восстановления Армянского царства. С именем Х. Лазаряна связана его деятельность по сохранению, развитию и

[27] *Նույն տեղում, թղթ. 108, գ. 83, վավ. 12:*

дальнейшему существованию Лазаревской семинарии. Очень многогранны и разнообразны также его благотворительные начинания. Х. Лазарян всячески содействовал развитию арменоведения. По его поручению известный русский историк Сергей Глинка взялся за исследование армяно-русских отношений и создал ценные труды, посвященные этому вопросу. Известны также связи Хачатура Лазаряна с французскими учеными арменоведами Виктором Ланглуа и Эдуардом Дюлоре. Велик и благодарен вклад Хачатура Лазаряна в бескорыстное служение своему родному народу и заботе о его нелегкой судьбе.